

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



2009-2010

ՈՒՍՏԱՐՎԱ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին.....	5
Ուսումնամեթոդական վարչություն	104
Մինչհամալսարանական կրթության վարչություն.....	108
Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն	110
Միջազգային համագործակցության վարչություն.....	114
Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն	129
Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն	132
Արհեստակցական կազմակերպություն	134
Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարան.....	137
Պատմության քանգարան.....	140
Շրջանավարտների և կարիերայի կենտրոն.....	142
Մշակույթի կենտրոն.....	145
Գիտակազմակերպական բաժին.....	148
Համալսարանական կրթության զարգացման բաժին.....	149
Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին.....	151
Ուսանողական կառույցներ	152
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ.....	160
Աստվածաբանության ֆակուլտետ	182
Արևելագիտության ֆակուլտետ	191
Ժողովրդագրության ֆակուլտետ	202
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ.....	208
Իրավագիտության ֆակուլտետ.....	218
Կենսաբանության ֆակուլտետ	237
Հայ բանասիրության ֆակուլտետ.....	290
Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ	313
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ.....	335
Պատմության ֆակուլտետ.....	347
Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ.....	372
Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ.....	390
Ռուս բանասիրության ֆակուլտետ	421
Սոցիոլոգիայի ֆակուլտետ.....	433
Տնտեսագիտության ֆակուլտետ.....	444
Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ.....	457
Քիմիայի ֆակուլտետ.....	477
Ֆիզիկայի ֆակուլտետ.....	503
Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետ.....	547
Համահամալսարանական ամբիոններ.....	551
Իջևանի մասնաճյուղ.....	556
«Քենդլ» գիտահետազոտական ինստիտուտ	584
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ.....	589
Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն	609
Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոն.....	615
Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն.....	620
Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն	622
Հունագիտության գիտաուսումնական կենտրոն-գրադարան.....	625
Եզրապատմության հայկական կենտրոն.....	626
Հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոն.....	628
Կոսմոլոգիայի գիտահետազոտական խումբ	630
Ռուսական կենտրոն	632
Հրատարակչություն	634
Գիտական հանդեսներ.....	639
2009-2010 ուստարում ԵՊՀ-ում տեղի ունեցած հիշարժան միջոցառումներն ըստ	
www.y-su.am-ի լրահոսի	640

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտի գիտական ղեկավար՝ Միմոնյան Արամ Հրաչիկի, ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Փոխանօրեն՝ Գրիգորյան Վարդան Սուրենի, բան. գիտ. թեկնածու

Գիտական քարտուղար՝ Ղարիբյան Ալիկ Ավետիքի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ինստիտուտի գործունեության ուղղությունները

Ինստիտուտի առջև խնդիր է դրված հետազոտությունների հիմնական առանցքը դարձնել հետևյալ ուղղությունները.

- Հայ ազգային ինքնության խնդրի, հայ ժողովրդի հոգեկերտվածքի և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն (Հայ ինքնության և մշակույթի բաժին),
- Հայ հնագիտություն (Հնագիտական հետազոտությունների լաբորատորիա),
- Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, պատմագրություն և մատենագիտություն (Ցեղասպանագիտության բաժին),
- Հայ-օսմանական առնչություններ (Օսմանագիտության բաժին),
- Հայ-վրացական կապեր (Վրացագիտության հայկական կենտրոն),
- Հայագիտական, պատմագիտական և աղբյուրագիտական ժառանգության ուսումնասիրություն (Աղբյուրագիտության լաբորատորիա),
- Արևմտահայ և արևելահայ լեզվական առնչությունների ուսումնասիրություն (Հայ ինքնության և մշակույթի բաժին),
- Միյուռքի տնտեսական, գիտական և մշակութային ներուժի ուսումնասիրություն, հայրենիք-սփյուռք կապերի հետազոտություն (Միյուռքագիտության բաժին),
- Վիրտուալ (էլեկտրոնային-համացանցային) հայագիտություն (Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժին):

Ինստիտուտի գործունեության հիմնական նպատակները

ՀՀ անկախության ձեռքբերումից ի վեր հայագիտության առջև ծառայան նոր խնդիրներ: Ազգային պետականության կերտման ճանապարհին հայության համար կենսական նշանակություն ունի այնպիսի հարցերի լուծումը, ինչպիսիք են՝ ազգային ինքնության պահպանումը, հայրենիք-սփյուռք փոխհարաբե-րությունների նորոգի արժևորումը, ազգային և համապետական այլ հիմնախնդիրներ:

Վերջին տարիներին օրակարգային դարձած ազգային-պետական մի շարք կարևոր հիմնահարցեր՝ հայ-թուրքական հարաբերությունները, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը և այլն, պահանջում են նոր մոտեցումներ և նոր արժևորում: Ըստ այդմ՝ հայագիտությունն այսօր դարձել է ազգային հասարակական կյանքի, անվտանգության ապահովման կարևորագույն գործոն, ավելին՝ հայագիտության զարգացման նկատմամբ օրավուր աճող հետաքրքրությունը թե՛ Միյուռքում, թե՛ Մայր հայրենիքում հաստատում է նրա ազգային կենսագործունեության առաջնահերթ ուղ-ղություններից մեկը լինելը, որը նպատակաուղղված է մեր պետության կայացմանն ու հզորացմանը:

ԵՊՀ ՀՀԻ-ի գիտական հետազոտությունների կարևորագույն գերակայություններից են նաև Հայաստանում արդիական այնպիսի ուղղությունների զարգացումը, ինչպիսիք են՝ հայագիտության բնագավառում տեղեկատվական անվտանգությունը, քաղաքական հայագիտությունը և այլն:

Հասունացել է սերտ գործնական կապեր հաստատելու անհրաժեշտությունը ինչպես արտերկրում գործող ճանաչված հայագիտական կենտրոնների և ճանաչված հայագետների, այնպես էլ պատմագիտական և քաղաքական հիմնախնդիրներով զբաղվող խոշոր գիտական կենտրոնների հետ, ինչը հնարավորություն կտա կտրուկ բարձրացնել հայագիտական հետազոտությունների մեթոդական, մեթոդաբանական և տեսական

մակարդակը: Այդպիսի կապերի հաստատումը կարևոր է նաև այն առումով, որ ներկայումս աշխարհի հայագիտական տարբեր կենտրոններ հայագիտության հիմնարար սկզբունքներում դրսևորում են որոշ մոտեցումներ, որոնք շատ դեպքերում թույլ չեն տալիս ազգային-պետական առանցքային խնդիրների հարցում ձևավորել գործունեության միասնական հայեցակարգ:

2009-2010 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս	Քարտեզ	Թարգմանություն
-	6	1	2	38	4	44	2

Ինստիտուտում գործող լաբորատորիաների եւ բաժինների թիվը՝ 9

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի վարիչ՝ *Միմոնյան Արամ Հրաչիկի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Հովհաննիսյան Հայկազ Ժորայի, պատմ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Ղարիբյան Ալիկ Ավետիքի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Աղաբաբյան Ալվինա Սամվելի, կրտսեր գիտաշխատող
4. Կոնդակչյան Կատարինա Ասատուրի, կրտսեր գիտաշխատող

Լաբորատորիայի հիմնական խնդիրները

1. Հայագիտությանը վերաբերող արխիվային նյութերի համակարգում և վերլուծություն:
2. Հայաստանից դուրս հայագիտական բնույթի նյութերի հավաքում, համակարգում և հրատարակության նախապատրաստում:
3. Արժեքավոր փաստաթղթերի բացահայտում և հրատարակում:

Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

1. Լաբորատորիան հետազոտական աշխատանքներ է կատարում Հայաստանի և հայերի վերաբերյալ ռուսական աղբյուրագիտական և պատմագիտական ժառանգության ուղղությամբ:
2. Հետազոտական աշխատանքների մեկ առանձին ուղղություն է Հայոց ցեղասպանության վերաբերյալ աղբյուրագիտական նյութերի հավաքագրումը:
3. Նյութեր են հավաքվում Լեռնային Ղարաբաղի և Չանգեզուրի պատմության վերաբերյալ:

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Ռուսական աղբյուրագիտական և պատմագիտական ժառանգությունը Հայաստանի և հայերի մասին (1801-1917թթ.) (պետական ֆինանսավորում):	Մինոնյան Ա. Հ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

2009-2010 ուստարում լաբորատորիայի աշխատակիցների կողմից հետազոտություններ են կատարվել հայագիտական հետևյալ ուղղություններով՝

- ռուսական պատմական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին,
- Հայոց ցեղասպանությանը վերաբերող վավերագրերի հավաքում,
- հայ ազատագրական պայքարի՝ Ղարաբաղի և Ջանգեզուրի տարածաշրջանին վերաբերող նյութերի բազայի ստեղծում,
- Արցախյան նորոշյա հերոսամարտը ներկայացնող նյութերի հավաքագրում ռուսական մամուլից:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Չեկուցումների թեզիս	Թարգմանություն
-	2	-	1	15	-	2

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Оганесян А. Ж.*, Россия и армяне: Уроки истории и реалии, изд. ЕГУ, Ереван, 2009, 152 с.
2. *Агабабян А. С.*, Всесоюзные газеты о проблеме Нагорного Карабаха (1988-1991 гг.), изд. ЕГУ, Ереван, 2010, 110 с.

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Ղարիբջան Ա. Ա.*, Տասը հարց, տասը պատասխան, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 48 էջ:

Հոդված

1. *Մինոնյան Ա. Հ.*, Հայոց Ցեղասպանությունը և Հենրի Մորգենթաուն, Միջազգային հարաբերություններ. Հայկական աշխարհ, թիվ 1, Երևան, 2010, էջ 16-21:
2. *Մինոնյան Ա. Հ., Գրիգորյան Ա. Կ.*, Որակի ներքին ապահովման համակարգի կառուցումը ԵՊՀ-ում, Որակի ներքին ապահովում. փորձ, խնդիրներ և միտումներ, Տեղեկատվության տարածման աշխատաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 15-20:
3. *Մինոնյան Ա. Հ., Գրիգորյան Ա. Կ., Աղասյան Ժ. Ա.*, Իրագեկ դասախոսական կազմը՝ որպես կրթության որակի ներքին երաշխիք, Որակի ներքին ապահովում. փորձ, խնդիրներ և միտումներ, Տեղեկատվության տարածման աշխատաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 68-72:
4. *Մինոնյան Ա. Հ.*, Համալսարանի՝ իբրև համագաղափար կառույցի առաքելությունը, «Գիտության աշխարհում», թիվ 4, Երևան, 2009, էջ 24-31:

5. *Ղարիբյան Ա. Ա.*, «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման որոշ մեթոդաբանական խնդիրների շուրջ, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, «Լրատու», թիվ 1 (8), «Դիզակ պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2010, էջ 192-196:
6. *Ղարիբյան Ա. Ա.*, Անդրադառնալու՞ են արդյոք Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման և փոխհարաբերությունների զարգացման մասին արձանագրությունները Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացի վրա, Տասը հարց, տասը պատասխան, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 15-17:
7. *Աղաբաբյան Ա. Ս.*, Արցախյան շարժման սկզբնավորումը և առաջին արձագանքները խորհրդային կենտրոնական մամուլում, «Տարեգիրք», մաս Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 175-186:
8. *Բաում Վ.*, Քրիստոնյաների վիճակը Թուրքիայում Առաջին աշխարհամարտի ավարտին (1917-1918) (հատված «Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները» աշխատությունից, թարգմանությունը՝ Է. Ա. Մակարյանի), «Էջմիածին» ամսագիր, մաս Գ, «Ս. Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2010, էջ 137-147:
9. *Բաում Վ.*, Հույների տեղահանումները մինչև պատերազմի վերջը (հատված «Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները» աշխատությունից, թարգմանությունը՝ Է. Ա. Մակարյանի), «Էջմիածին» ամսագիր, մաս ԺԲ, «Ս. Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2009, էջ 98-104:
10. *Гарибян А. А., Геворкян Г. Г.*, Тенденции развития науки в Ереванском государственном университете в 2005-2009 гг., О научных исследованиях и научных школах. Евразийское пространство, МГУ, Ереван, 2010, с. 83-88.
11. *Оганесян А. Ж.*, Кавказский дом: История и реалии, Положительные примеры из истории сосуществования народов и стран Южного Кавказа, “Антарес”, Ереван, 2009, с. 39-45.
12. *Grigoryan V., Grigoryan S.*, Russia and the Post-Soviet Space, Per Concordiam, vol. 1, N 2, Garmisch, 2010, p. 38-43.
13. *Gharibyan A. A.*, Evidence of archive sources of Azerbaijan on the genocide of Armenians in Karabakh, Միջազգային հարաբերություններ. Հայկական աշխարհ, թիվ 2, Երևան, 2010, էջ 19-21:
14. *Gharibyan A. A.*, The Social-Economic and Political situation in Transcaucasus (1918-1921), «Տարեգիրք», մաս Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 72-80:

Թարգմանություն

1. *Մարքոսյան Ե.*, Հայոց եպիսկոպոսությունների ծագումը (թարգմանությունը՝ Է. Ա. Մակարյանի), «Ալիք» հրատ., Թեհրան, 2009, 96 էջ:
2. *Բաում Վ.*, Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները (թարգմանությունը՝ Է. Ա. Մակարյանի), ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 190 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՏԵՉԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի վարիչ՝ Հարությունյան Բարկեն Հարությունի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Հայրունի Աշոտ Նորայրի, պատմ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Դանիելյան Էդվարդ Գալուստի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Հովսեփյան Յուրիկ Լենդրուշի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Հարությունյան Ռուզաննա Վասպուրականի, պատմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
5. Հայրապետյան Կարեն Պավելի, պատմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
6. Գրիգորյան Հովիկ Բարկենի, պատմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող

7. Եղիազարյան Կարինե Ալբերտի, պատմ. գիտ. թեկնածու, լաբորանտ
8. Մխիթարյան Վարդան Գառնիկի, գիտաշխատող, քարտեզագիր
9. Բաղալյան Գեղամ Միհրանի, գիտաշխատող
10. Եսայան Ջուլիետա Հրաչի, գիտաշխատող
11. Ղամբարյան Գոհար Գուրգենի, գիտաշխատող
12. Ապիկյան Տիգրան Ժիրայրի, ավագ ինժեներ
13. Բաղդասարյան Լիլյա Ռոբերտի, լաբորանտ
14. Միմոնյան Հակոբ Ալբերտի, լաբորանտ

Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

Լաբորատորիան զբաղվում է Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության խնդիրների քննությամբ, ատլասների և պատմական ու վարչական քարտեզների, օտար ատլասների ռուսերեն տարբերակների պատրաստմամբ:

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. «Հայաստանի առաջին հանրապետության պատմական ատլաս» (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Բ. Հ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Հաշվետու ուստարում լաբորատորիայի աշխատակիցներն ավարտական աշխատանքներ են կատարել Հայաստանի առաջին հանրապետության պատմական ատլասի ստեղծման ուղղությամբ, որի նշանակությունը մեծ է մեր նորանկախ պետության համար: Հավաքվել են զանազան բնույթի նյութեր ՀՀ արխիվներից՝ ատլասի տարբեր քարտեզները կազմելու համար: Լաբորատորիայի ջանքերով արժեքավոր նյութեր են բերվել նաև արտերկրից, մասնավորապես՝ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի արխիվներից:

Լաբորատորիայում կատարված այլ աշխատանքների մասին:

Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիան հանրապետությունում եզակի կենտրոն է, որը զբաղվում է Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության խնդիրների քննությամբ, քննազավառ, որ հայագիտության համար ունի ոչ միայն զուտ գիտական, այլև կարևոր արդիական քաղաքական նշանակություն:

Լաբորատորիայի աշխատակից Ռ. Հարությունյանն աշխատանքներ է իրականացրել «Հայկական մարզագանությունը IV-VII դարերում» (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն) թեմայով իր դոկտորական ատենախոսությունը, Կ. Հայրապետյանը՝ «Գաղթականության խնդիրը Հայաստանի առաջին հանրապետության ներքին քաղաքականության մեջ» թեմայով իր դոկտորական ատենախոսությունը, իսկ Վ. Մխիթարյանը՝ «Հայաստանի և Անդրկովկասի ֆրանսիական քարտեզագրությունը» վերտառությամբ իր թեկնածուական ատենախոսությունը պատրաստելու ուղղությամբ:

Լաբորատորիան կարող է քարտեզագրական ծառայություններ մատուցել ՀՀ Կառավարությանը և մասնավորապես Արտգործնախարարությանը՝ Ղարաբաղյան բանակցային գործընթացը քարտեզագրական նյութերով ապահովելու գործում և այլ անհրաժեշտ դեպքերում: Այն այսօր միակ գիտական կենտրոնն է, որ կարող է շարունակել պատմական աշխարհագրության և քարտեզագրության՝ որպես գիտության հարուստ ավանդույթները, զարգացնել դրանք և ընդհանրապես ողջ աշխարհում զարկ տալ Հայոց պատմության և Հայաստանի պատմական աշխարհագրության քարոզչությանը: Լաբորատորիան այն օղակն է, որ կարող է մշտապես հակահարված տալ թուրքական և ադրբեջանական պատմագիտության հակահայկական նկրտումներին:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրու- թյուն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների քեզիս	Քարտեզ
-	1	-	-	2	-	40

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. Միննյան Հ. Ա., Հայերեն-անգլերեն-ֆրանսերեն-իսպաներեն բառարան-գրուցարան, ՎՄՎ-ՊԻԻՆՏ, Երևան, 2010, էջ 272:

Հոդված

1. Հայրունի Ա. Ն., Հայկական հարցը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թ. օգոստոսին, «Էջմիածին», թիվ 2, «Ս. Էջմիածին» տպարան, Էջմիածին, 2009, էջ 76-100:
2. Հարությունյան Բ. Վ., Մարզպանական Հայաստանի սահմանները, ԲԵՀ, թիվ 2, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 5-13:

Քարտեզ

1. Հարությունյան Բ. Հ., Լեռնային Ղարաբաղի առկա (հայերեն և ռուսերեն լեզուներով), «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2009:
 - Հայոց Արևելից կողմերի (Արցախ և Ուտիք) և Սյունիքի վարչական կացությունն ըստ անտիկ աղբյուրների, 1:3 200 000:
 - Քրիստոնեության տարածումը Հայոց Արևելից կողմերում (Արցախ և Ուտիք), 1:2 400 000:
 - Հայոց Արևելից կողմերը (Արցախ և Ուտիք) ըստ «Աշխարհացույց»-ի, 1:1 400 000:
 - Հայոց Արևելից կողմերը Բագրատունիների տերության կազմում 885-908 թթ., 1:1100 000:
 - Արցախահայության ազգային ազատագրական պայքարը XVIII դ., 1:1 140 000:
 - Խամսայի մելիքությունների միությունը 1735-1752թթ., 1:1 960 000:
 - Լեռնային Ղարաբաղի (Արցախ) և Հայկական Գանձակի միացումը Ռուսական կայսրությանը 1804-1813 թթ., 1:920 000:
 - Լեռնային Ղարաբաղը և Հայկական Գանձակը 1813-1917 թթ., 1:1 450 000:
 - Լեռնային Ղարաբաղը և Հայկական Գանձակը Ադրբեջանի (Ադրբեջանական) ԽՍՀ տիրապետության ներքո, 1:1 100 000:
 - Административное деление Восточных краев Армении (Арцах, Утик) и Сюника согласно трудам античных авторов, 1:3 200 000.
 - Распространение христианства в Восточных краях Армении (Арцах, Утик), 1:2 400 000.
 - Восточные края Армении (Арцах, Утик) по “Ашхарацуйц”-у (“Армянская география”), 1:1 400 000.
 - Восточные края Армении в составе державы Багратуни (885-908 гг.), 1:1100 000.
 - Национально-освободительная борьба армян Арцаха в XVIII в., 1:1 140 000.
 - Союз меликов Хамсы 1735-1752 гг., 1:1 960 000.
 - Присоединение Нагорного Карабаха (Арцах) и Армянского Гандзак к Российской империи в 1804-1813 гг., 1:920 000.
 - Нагорный Карабах и Армянский Гандзак в 1813-1917 гг., 1:1 450 000.
 - Нагорный Карабах и Армянский Гандзак в составе Азербайджанской ССР, 1:1 100 000.

2. Մխիթարյան Վ. Գ., Հայկական ԽՍՀ, ԼՂԻՄ և հարակից երկրներ (1988-90 թթ.), մասշտաբ 1:2700000, Հայ ինքնության պատկերագրությունը, «Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը», հ. 1 (հայերեն և անգլերեն), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2009:
3. Բաղայան Գ. Մ., Լեռնային Ղարաբաղի ատլաս (հայերեն և ռուսերեն), «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2009:
 - Հայկական Գանձակ (XX դ. սկիզբ), 1:350 000:
 - Պատմական ակնարկ (տեքստ):
 - Խամսայի մելիքությունների միությունը 1735-1752թթ., 1:960 000:
 - Հայ-թաթարական ընդհարումները Հայոց Արևելից կողմերում 1905-1906 թթ., 1:1 120 000:
 - Հայաստանյայց առաքելական եկեղեցու Արցախի թեմի պատմությունը (տեքստ):
 - Հայաստանյայց առաքելական եկեղեցու Արցախի թեմը, 1: 750 000:
 - Армянский Гандзак (начало XX в.).
 - Исторический очерк (текст).
 - Союз меликств Хамсы 1735-1752 гг.
 - Армяно-татарские столкновения в Восточных краях Армении (1905-1906 гг.).
 - История Арцахской епархии Армянской Апостольской Церкви (текст).
 - Арцахская епархия Армянской Апостольской Церкви.
4. Բաղայան Գ. Մ.
 - Հայկական լեռնաշխարհի ցեղապետություններն ու Հայաստանի պատերազմները Խեթական պետության դեմ (մ.թ.ա. 2-րդ հազ. կես - մ.թ.ա. 1-ին հազ. կես), մասշտաբ 1:4700 000, «Հայոց պատերազմները և հայ ռազմարվեստը» բազմահատորյակ, հ. 1, «Փրինթինֆո» հրատ., Երևան, 2009, էջ 8:
 - Սևանի ավազանի բրոնզեդարյան և վաղ երկաթեդարյան պաշտպանական համակարգը, մասշտաբ 1:400 000, «Հայոց պատերազմները և հայ ռազմարվեստը» բազմահատորյակ, հ. 1, «Փրինթինֆո» հրատ., Երևան, 2009, էջ 41:
 - Վանի թագավորության ռազմական հաջողությունները մ.թ.ա. 9-8-րդ դդ. սահմանագլխին, մասշտաբ 1:5 200 000, «Հայոց պատերազմները և ռազմարվեստը» բազմահատորյակ, հ. 2, «Փրինթինֆո» հրատ., Երևան, 2009, էջ 6:
 - Մպրտը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում (1900-1922 թթ.) քարտեզ, Հայկ Դեմոյանի «Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում» այբոմ-մենագրություն, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2009, էջ 64:
 - Հայոց ձոր (XX դ. սկիզբ), մասշտաբ 1:220 000, Երվանդ Կյուրեղյան, Իմ հուշերի ճանապարհով, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն, Երևան, 2009:
 - Երվանդ Կյուրեղյանի մարտական ուղին (1906-1922 թթ.), մ. 1:1 400 000, Իմ հուշերի ճանապարհով, Երևան, 2009, (ներդիր), «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն, Երևան, 2009:
 - Մուշ-Տարոնը 1914 թ. դրությամբ, մասշտաբ 1:160 000, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2010:
 - Սասունը 1914 թ. դրությամբ, մ. 1:160 000, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2010:

ՀԱԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի վարիչ՝ Ավետիսյան Հայկ Գրիգորի, պատմ. գիտ. դոկտոր

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Գնունի Արտակ Վարդգեսի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Հովհաննիսյան Վահան Էդուարդի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Տեր-Մարտիրոսով Ֆելիքս Իվանի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող

4. Գասպարյան Բորիս Զավենի, կրտսեր գիտաշխատող
5. Ավետիսյան Նատալյա Հայկի, լաբորանտ

Լաբորատորիայի հիմնական խնդիրները

Հայաստանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրություն, որը ներառում է դաշտային աշխատանքները, ինչպես նաև նյութի լաբորատոր մշակումը, չափագրումը և հրապարակումը: Բացի դրանից՝ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի աշխատակիցների կողմից ուսումնասիրվում և վերակազմվում է հնագույն լանդշաֆտը, ինչը հիմքեր է ստեղծում հնեաաշխարհագրական մոդելի վերակազմության համար: Վերակազմության առարկա են նաև հնագույն ճանապարհները:

Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

- Պեղումներ են կատարվել Արամուսի ուրարտական ամրոցի տարածքում:
- Ուսումնասիրվել են Կոտայքի մարզի մի շարք հանգուցային հուշարձաններ՝ Կամարիս ամրոցը:
- Անցկացվել են պեղումներ Երվանդաշատում:
- Ուսումնասիրվել են Հատիս լեռան վանակատե հումքի աղբյուրները և դրանց՝ Կոտայքի սարահարթի և հարակից տարածքների քարի դարի բնակչության կողմից օգտագործման օրինաչափությունների քաղաքային խնդիրները:
- Կատարվել են պեղումներ Վայոց ձորի Արենի գյուղի մերձակայքում գտնվող քարայրում:
- Քարաշամբի ուշ-բրոնզ վաղ երկաթեդարյան համալիրների ուսումնասիրության շրջանակներում համակարգվել են և տիպաբանության են ենթարկվել մախկին պեղումներից հայտնաբերված նյութերը:
- Հետազոտություններ են կատարվել ուրարտական մետաղագործության վերաբերյալ:
- Ուսումնասիրվել է Սևանի թերակղզու տարածքը, մասնավորապես Վազգենյան դպրանոցի հարակից տարածքը:
- Մայր տաճարի տարածքից հավաքվել և համակարգվում է վերգետնյա խեցեղեն նյութը:
- Կատարվել են ուսումնասիրություններ Քաշաթաղի շրջանի Աղավնո 2 և 3 բնակավայրերում, ուսումնասիրվել են Սյունիք-Արցախ հնագույն ճանապարհները:

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հայաստանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրություն (քարե դարից միջնադար) (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Հ. Գ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Հաշվետու ժամանակահատվածում թեմայի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. 2009-2010 ուստարում Հ. Ավետիսյանի կողմից շարունակվել են Արամուսի ամրոցի պեղումները: Շարունակելով պեղումներն ամրոցի արևմտյան մասում՝ արշավախումբը նպատակ ուներ ճշտելու բնակավայրի կառուցապատման փուլերը՝ հստակեցնելու ժամանակագրական խնդիրները, պարսպապատերի կառուցվածքը, շերտագրական իրողությունները և այլն: Այս խնդիրների պարզաբանման նպատակով պեղավայր ընտրվեց միջնաբերդի արևմտյան մասի կենտրոնական հատվածը: Կատարվել են տեղանքի և պեղավայրի փաստագրման և վավերացման աշխատանքները: Պեղված կացարաններից մեկը կառուցված է պարսպապատին կից: Այն հատակագծում ուղղանկյուն

է՝ հյուսիս-հարավ ուղղվածությամբ: Հյուսիսային պատը պարիսպն է՝ 2,1 մ հաստությամբ: Արևելյան պատի երկարությունը 4,5 մ է, իսկ հարավայինինը՝ 3,5 մ: Նշված պատերը շարված են կիսամշակ քարերով, ամրացված են կավաշաղախով: Կացարանի հատակը կավածեփ է: Տեղ-տեղ պահպանված են սալահատակի մնացորդները: Արևելյան և հարավային պատերի մոտ պեղվել են միջին չափի ուրարտական երկու կարասների մնացորդներ և խեցեղեն: Նշված կացարանից հյուսիս-արևմուտք պարսպապատի հետազոտման ժամանակ պարզվել է, որ այն ձևափոխության է ենթարկվել հետուրարտական շրջանում՝ հանդիսանալով մուտք: Պեղված կացարաններից հյուսիս-արևելք պահպանվել են որմնախցերի հետքեր: Այստեղից արևելք բացվել է երկու ժայռաբեկորներից շարված երկշար պատ: Ժայռաբեկորների հատվածը կատարել է հարթակի դեր: Հայտնաբերված խեցանոթների մեջ աչքի են ընկնում երկրագործական և անասնապահական մթերքների վերամշակման և պահպանման համար նախատեսված անոթները: Հայտնաբերվել է նաև ծխական խեցեղեն:

2. Ֆ. Տեր-Մարտիրոսովի կողմից հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Երվանդաշատի քաղաքամերձ պալատի պեղումները: Հայտնաբերված խեցեղեն նյութը վերաբերում է մ.թ.ա. III-I դդ-ին՝ հիմք տալով ենթադրելու այստեղ մի քանի շինարարական հորիզոնների առկայությունը, որոնցից հնագույնը վերաբերում է Երվանդյան, իսկ նորը՝ Արտաշեսյան ժամանակաշրջանին: Պալատի ճարտարապետության ուսումնասիրությունը հաստատում է այս վարկածը: Պեղումները 2010 թ-ի սեպտեմբերի 8-ի դրությամբ շարունակվում են:
3. Բ. Գասպարյանի կողմից շարունակվել են Արենիի քարայրի պեղումները: Բացվել են մի շարք արտադրական, օժանդակ և, հավանաբար, պաշտամունքային համալիրներ: Հաշվետու ժամանակահատվածում կատարված պեղումներն առատ նյութ են տրամադրել մ.թ.ա. V-IV հազարամյակին թաղման ծեսերի վերաբերյալ: Հայտնաբերված խեցեղենի մանրամասն ուսումնասիրությունը թույլ կտա հստակեցնելու բազմաթիվ հարցեր՝ կապված Հայկական լեռնաշխարհում մշակույթների ծագումնաբանության և զարգացման, ինչպես նաև հարևան տարածաշրջանների հետ փոխառնչությունների հետ: Պեղումները 2010 թ-ի սեպտեմբերի 8-ի դրությամբ շարունակվում են:
4. Ն. Ավետիսյանի կողմից շարունակվել է ուրարտական մետաղի ուսումնասիրությունը: Ընդամին՝ մետաղագործության նմուշները դիտարկվում են արվեստաբանական տեսանկյունից:
5. Վ. Հովհաննիսյանը շարունակել է Քարաշամբի նախկին պեղումներից ձեռք բերված նյութերի համակարգումը և թվագրումը՝ պատրաստելով 1980-ականներին ուսումնասիրված համալիրների համալիր տեղեկատու: Վ. Հովհաննիսյանի և Հ. Ավետիսյանի կողմից ուսումնասիրվել են նաև Ուրարտուի մշակույթի զարգացման հիմնախնդիրները:
6. Ա. Գևորգյանի կողմից ուսումնասիրվել է Սևանի թերակղզու Վազգենյան դպրանոցի տարածքում հայտնաբերված միջնադարյան պարսպաշարը: Համադրելով պեղածո նյութը և գրավոր աղբյուրները՝ կարելի է ենթադրել, որ պարիսպը կարող էր կառուցված լինել X դարում: Այրված հորիզոնի ուսումնասիրությունը թույլ տվեց ենթադրելու, որ այն առաջացել է 913 թ-ի արաբական ներխուժման ժամանակ: Միևնույն ժամանակ այստեղ հայտնաբերվեցին մ. թ. I դարին վերաբերող նյութեր, ինչը վկայում է, որ կղզին բնակեցված է եղել դեռևս անտիկ ժամանակաշրջանում: Հատկանշական է նույն վայրից ուշ բրոնզեդարյան խեցեղենի գտածոն, ինչը սույն հնավայրի ուսումնասիրությունը հեռանկարային է դարձնում նաև վաղ հնագիտության տեսակետից: Ծարունակվել են հետազոտությունները նաև Մայր տաճարի տարածքում: Այստեղից հավաքվել, համակարգվել և թվագրվել է վերգետնյա նյութը: Հայտնաբերված խեցեղեն նյութի վաղագույն օրինակները վերաբերում են վաղ բրոնզի դարին: Հայտնաբերվել է նաև մ.թ. առաջին դարերին առնչվող խեցեղեն: Հատկանշական է տաճարի հարավային հատվածում հզոր այրված հորիզոնի հայտնաբերումը: Հաշվետու ժամանակահատվածում ուղեգծային մի շարք արշավների միջոցով հետազոտվել է Ծահունյան-Նորակերտ հատվածը: Այստեղ հաստատագրված ճարտարապետական կառույցները վկայում են ընդարձակ դամբարանադաշտերի և պաշտամունքային կառույցների առկայության մասին: Մյուսիքում և Արցախում կատարված ուսումնասիրությունները կենտրոնանում էին Աղավնո գետի վերնահոսանքում, Ծիծեռնավանքի մերձակայքում, ինչպես նաև Ողջիի հովտում: Մասնավորապես հաստատագրվեցին Աղավնո 2 և 3 բնակավայրերը, որոնք գոյատևել են սկսած

մ.թ.ա. VII-VI դդ. մինչև միջնադար: Ողջիի հովտում հետազոտվել են Գ-բամփ, Կերեն 1 և Կերեն 2 բնակատեղիները: Ակներև է, որ բնակատեղիներն այստեղ հիմնականում տեղադրված են գետի հովտում՝ ներկայիս Կապան-Կովսական ճանապարհի երկայնքով:

Լաբորատորիայում կատարված այլ աշխատանքների մասին:

1. Պ.գ.դ. Հ. Ավետիսյանի ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Հ. Մահմուդյանը «Արևմտյան Իրանի հնագիտական հուշարձանները Լուրիստանյան բրոնզի տարածման ժամանակաշրջանում (մ.թ.ա. III-I հազ.)» թեմայով:
2. 2009 թ-ի ղեկտեմբերին պ.գ.դ. Հ. Ավետիսյանը մասնակցել է Ինստիտուտում կայացած միջազգային գիտաժողովի աշխատանքներին և ընթերցել «Ուրարտական և էթիունյան խեցեղենի հիմնախնդիրները» զեկուցումը:
3. Պ.գ.դ. Հ. Ավետիսյանը և պ.գ.թ. Ֆ. Տեր-Մարտիրոսովը մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում:
4. Պ.գ.դ. Հ. Ավետիսյանը, պ.գ.թ. Ֆ. Տեր-Մարտիրոսովը, Ա. Գնունին և Բ. Գասպարյանը մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել «Հին Հայաստանի մշակույթը» XV հանրապետական գիտաժողովում:
5. Պ.գ.թ. Ֆ. Տեր-Մարտիրոսովը 2010 թ-ի ապրիլին մասնակցել և զեկուցումով հանդես է եկել Ռուսում (Ֆրանսիա) տեղի ունեցած միջազգային գիտաժողովում:
6. Պ.գ.դ. Հ. Ավետիսյանը մասնակցել է «Մարաշի ասեղնագործություն» (Հալեպ, 2010) գրքի խմբագրական խորհրդի աշխատանքներին:
7. Պ.գ.թ. Ա. Գնունին 2010 թ-ին մասնակցել է Բերձորի (ԼՂՀ) երկրագիտական թանգարանի նյութերի անձնագրավորման, ցուցակագրման և կատալոգացման աշխատանքներին:
8. Պ.գ.թ. Ա. Գնունին 2009-2010 թթ. մասնակցել է Էջմիածնի պատմա-ազգագրական թանգարանի նոր ցուցադրության կազմակերպմանը, ինչպես նաև անձնագրերի վերանայման և ճշգրտման աշխատանքներին:

Հրատարակություններ

Գասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	17	3

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Ավետիսյան Հ. Գ., Բորոխյան Ա. Ա.*, Ուրարտուի հնագիտություն (ամրոց-բնակավայրեր և դամբարանային համալիրներ), «Նաիրի» հրատ., Երևան, 2010, 233 էջ:

Հոդված

1. *Ավետիսյան Հ. Գ.*, Ուրարտուի մշակույթի հիմնախնդիրները, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2, Երևան քաղաքի պատմության թանգարանի հրատ., Երևան, 2009, էջ 9-14:
2. *Ավետիսյան Հ. Գ.*, Ուրարտական մետաղյա սպասքը, «Հայ աստվածաբան», մաս Գ, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 197-216:
3. *Ավետիսյան Հ. Գ.*, Բորիս Պիոտրովսկու կյանքն ու գործունեությունը, «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, թիվ 5, Երևան, 2010, էջ 159-162:
4. *Ավետիսյան Հ. Գ.*, Արամուսի հնագիտական համալիրները, «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, թիվ 5, Երևան, 2010, էջ 83-90:

5. *Ավետիսյան Հ. Գ.*, Հայկական մշակույթը մ.թ.ա. XI-VI դդ., Աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», մաս Դ, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 233-269:
6. *Ավետիսյան Ն. Հ.*, Վանի թագավորության մետաղյա քանդակը, «Հայ աստվածաբան», մաս Գ, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 209-205:
7. *Gasparyan B., Liagre J., Arakelyan D., Nahapetyan S., Chataigner C.*, Mobilite des groupes prehistoriques et approvisionnement des matieres premieres a la fin du Paleolithique superieur dans le Petit Caucase: donnees resentes sur le site de plein air de Kalavan 1 (nord du lac Sevan, Armenie) Le concept de territoires dans le Paleolithique superieur europeen Proceedings of the XV world congress BAR International Series Oxford, 2009, p. 75-84.
8. *Գասպարյան Բ. Զ., Պետրոսյան Ա., Փինհասի Ռ., Առաքելյան Դ., Գաբրիելյան Ի., Նահապետյան Ա.*, Քարեդարյան հուշարձանների ուսումնասիրությունը Աղստևի հովտում 2005-2008 թթ., Տավուշի նյութական և հոգևոր ժառանգությունը, «Գիտություն» հրատ., Երևան, 2009, էջ 41-56:
9. *Գասպարյան Բ. Զ., Փինհասի Ռ., Նահապետյան Ա., Դուկասյան Ռ.*, Միջին պլեյստոցենյան նորահայտ հուշարձան Աղստևի հովտում, Հովք-1 քարայրի 2005-2008 թթ-ի ուսումնասիրության արդյունքները, Տավուշի նյութական և հոգևոր ժառանգությունը, «Գիտություն» հրատ., Երևան, 2009, էջ 57-66:
10. *Գասպարյան Բ. Զ., Պետրոսյան Ա., Երիցյան Բ.*, Վահագնի-1 քարեդարյան բացօթյա հնավայրի ուսումնասիրության նախնական արդյունքները, «Երևան-2», գիտական հոդվածների ժողովածու, Երևան քաղաքի Պատմության քանգարանի հրատ., Երևան, 2009, էջ 35-39:
11. *Գնունի Ա. Վ., Խաչատրյան Գ. Ա.*, Նորահայտ հուշարձաններ Աղավն գետի վերնահոսանքում, «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, թիվ 5, Երևան, 2010, էջ 53-66:
12. *Ղարիբյան Ի. Գ., Հակոբյան Հ. Պ., Գնունի Ա. Վ., Խաչատրյան Գ. Ա., Վրթանեսովա Տ. Վ.*, Բջնիի հուշարձանները, (պեղումների արդյունքները), «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, թիվ 5, «ՄԻՄ» հրատ., Երևան, 2010, էջ 67-83:
13. *Тер-Мартirosов Ф. И.*, Город. Термин и градостроительная структура в истории Армении. «Ճարտարապետություն և շինարարություն», հ. 12, «Անտարես» հրատ., Երևան, 2009, էջ 50-55:
14. *Ter-Martirosov F. I.*, Ervandashat. Des Orontides aux Artaxides. Les douze caqpitales d' Armenie. Sous la direction de P. Donabedian et C. Mutafian, Marsielle, 2009, p. 76-87.
15. *Ter-Martirosov F. I.*, La ville et La structure Les douze caqpitales d' Armenie. Sous la direction de P. Donabedian et C. Mutafian, Marsielle, 2009, p. 294-298.
16. *Тер-Мартirosов Ф. И.*, Прикладное искусство Армении в эллинистическую эпоху, Պատմության ֆակուլտետի «Տարեգիրք», ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 311-318:
17. *Տեր-Մարտիրոսով Ֆ. Ի.*, Նոր տվյալներ ուրարտական մշակույթի վերաբերյալ, «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, թիվ 5, «ՄԻՄ» հրատ., Երևան, 2010, էջ 131-136:

Զեկուցումների թեզիս

1. *Gasparyan B., Arimura M. Chataigner C.*, Kml0-2. An Early Holocene Site in Armenia Neo-Lithics, The Newsletter of Southwest Asian Neolithic Research, 2009, 9-Feb, p. 17-19.
2. *Тер-Мартirosов Ф. И.*, Предание о Паруйре Скайорди и скифское царство в Передней Азии. Древность: Историческое знание и специфика источника. Материалы международной научной конференции, вып. IV ИВ РАН, Москва, 2010, с. 127.
3. *Тер-Мартirosов Ф. И.*, Форма власти в государствах Урарту (IX-VII) и Армении (VI), Пятая международная конференция “Иерархия и власть в истории цивилизации”, Тезисы докладов, Москва, 2009, с. 86-87.

ՎԻՐՏՈՒԼ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ Հովհաննիսյան Միեր Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Աղաջանյան Թագուհի Կամոյի, ավագ լաբորանտ
2. Մարտիրոսյան Հասմիկ Էդիկի, լաբորանտ
3. Նազարյան Ստելլա Կարենի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

Կարևորելով ինտերնետի դերը ընդհանուր տեղեկատվական դաշտում՝ բաժինը ստանձնել է ինտերնետում հայագիտական և հակահայագիտական կայքերի մոնիթորինգի, դրանցում գետնտված նյութերի վերհանման, համակարգման, հասցեագրման գործը: Ինստիտուտի համապատասխան գիտաշխատողների կողմից ստացված համարժեք և նախահարձակ գիտական հոդվածների ու այլ բնույթի նյութերը բաժնի կողմից տեղադրվում են ինստիտուտի պաշտոնական կայքում /www.armin.am/, ինչպես նաև այլ ինտերնետային կայքերում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Բաժնի կողմից շարունակվել է իրականացվել ինստիտուտի պաշտոնական կայքի /www.armin.am/ սպասարկումը: Ավարտին է հասցվել հակահայկական ուղղվածության գիտական կամ գիտահանրամատչելի բովանդակությամբ նյութեր տարածող աղբյուրների և թուրքական կայքերի վերլուծական տեղեկատու-գրքույկի կազմումը, որում նախկին 35 կայքերի փոխարեն այժմ ներկայացված է 49 կայք: Տեղեկատուն վերջնական խմբագրումից հետո կներկայացվի հրատարակման: Միաժամանակ սկսվել են աշխատանքներ հայկական այն կայքերի մշակման ուղղությամբ, որոնք հնարավոր համարժեք քայլեր են կիրառում մեր նշած աղբյուրների և թուրքական կայքերի նկատմամբ: Նպատակը՝ զուգահեռներ տանել մեր և նրանց գործունեության միջև՝ հասկանալու համար առկա իրավիճակը, ինչը հնարավորություն կտա հետագայում ավելի արդյունավետ գործել այս դաշտում: Շարունակվել են հակահայկական գիտական և գիտահանրամատչելի բնույթի նյութերի արխիվավորումը և դրանց հասցեագրումն ինստիտուտի համապատասխան գիտաշխատողներին:

Սույն թվականի ապրիլի 19-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցած Հայոց մեծ եղեռնի 95-ամյակին նվիրված «Մեծ եղեռն. ճանաչում, դատապարտում, հատուցում» խորագրով միջազգային գիտաժողովին մասնակցել է նաև պ.գ.թ. Մ. Հովհաննիսյանը՝ ներկայացնելով «Հայոց ցեղասպանության ներկայացման խնդիրները համացանցում» խորագրով զեկույցը: Չեկույցը տեղադրված է ինստիտուտի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղման ներքո (<http://armin.am/education/id/181/Ing/2>):

Պ.գ.թ. Մ. Հովհաննիսյանի կողմից մշակվել և հրատարակվել է «Հայագիտության արդի մարտահրավերները համացանցում» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկ, որի հիման վրա էլ սույն թվականի սեպտեմբերից Պատմության և Ժուռնալիստիկայի ֆակուլտետների մագիստրատուրայում դասավանդման մտցվեց համանուն վերնագրով առարկան:

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հայաստանի պատմական և արդի տեղանունների բառարան: (Պետական ֆինանսավորում):	Բարսեղյան Հ. Խ.
2. Վաղ միջնադարյան գեղարվեստական արձակի ժանրային համակարգը (5-9-րդ դարեր): (Պետական ֆինանսավորում):	Մադոյան Ա. Գ.
3. Բառագործածական և քերականական կարծրատիպային շեղումները գրական հայերենից զանգվածային լրատվական միջոցների լեզվում: (Պետական ֆինանսավորում):	Գևորգյան Կ. Հ.

Չայոց լեզվի եւ գրականության ուղղությամբ ինստիտուտում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. 2009 թվականին ավարտվել է բառարանի հինգհատորյակի համառոտագրում-վերախմբագրումը, ինչպես նաև կատարվել են պահանջվող նոր տվյալների մասնակի լրացում-ճշգրտումներ: Ավարտվել է այս ամենի համակարգչային մուտքագրումը: Տպագրվել է բառարանի 1-3 հատորները:

Թեմա 2. Աշխատակիցներն ավարտել են նյութերի դասակարգումը: Բ.գ.թ. Ա. Մադոյանը պ.գ.թ. Պ. Հովհաննիսյանի հետ համատեղ կազմել և հրատարակության է պատրաստել Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմութիւնը», որը հանձնված է տպագրության: «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի այս տարվա 3-րդ համարում լույս կտեսնի Բ.գ.թ. Հ. Ավրյանի՝ «Հայ հին և միջնադարյան բանաստեղծության գաղափարական-աշխարհայացքային հիմքերը» վերոառոթյամբ հոդվածը: Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հրատարակչությունը լույս է ընծայել «Վարք սրբոց» ժողովածուի Ա և Բ հատորները, որ գրաբարից աշխարհաբարի է վերածել Բ.գ.դ. Ա. Մադոյանը: Վերջինս աշխարհաբարի է վերածել նաև «Պապիկ և թոռնիկ» գիրքը, որ ևս հրատարակել է Էջմիածնի տպարանը: Թեհրանում լույս է ընծայվել Ա. Մադոյանի «Ճորճուրդ մեծ և սքանչելի. Հայ մատենագրութիւն բոլորի համար» մենագրությունը:

Թեմա 3. Հաշվետու ժամանակահատվածում թեմայի շրջանակներում լույս է տեսել «Հեռուստառադիոթեր (լեզվական մեղանչումներից մինչև անաղարտություն)» աշխատությունը (հեղինակներ՝ Երջանիկ Գևորգյան, Սուսաննա Գևորգյան):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	1	-	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Հովհաննիսյան Մ. Ս.*, Հայագիտության արդի մարտահրավերները համացանցում, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 12 էջ:

ՎՐԱՑԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ Բայրամյան Հրաչիկ Սմբատի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Թամարյան Ջեննի Լավրենտիի, կրտսեր գիտաշխատող
2. Մանուկյան Վարդուհի Վարազդատի, ավագ լաբորանտ

Համատեղողներ

1. Ափցիաուրի Նինո Կոնստանտինի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող

Կենտրոնի հիմնական խնդիրները

Կենտրոնի նպատակն է ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն ու մշակույթը, ստեղծել համապատասխան ծրագրեր, անհրաժեշտ դասագրքեր ու ձեռնարկներ, բառարաններ, պատրաստել հայ վրացագետների կադրեր, Երևանի և Թբիլիսիի պետական համալսարանների միջև զարգացնել գիտակրթական կապերը:

Աշխատանքները հիմնականում նվիրված են վրաց գրականության պատմությանը, հայ-վրաց լեզվական-բառարանագրական առնչություններին, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանություններին, հայ գրականագիտության արձագանքը վրաց գրականությանը և վրաց գրականագիտության արձագանքը հայ գրականությանը, հայ-վրաց գրական-մշակութային կապերին և հարակից այլ խնդիրներին:

Վրացագիտության կենտրոնի աշխատանքներն ընթանում են մասնագիտական երկու ուղղությամբ՝ գիտամանկավարժական (վրացագիտություն մասնագիտացող խմբերում (I-IV կուրսեր) վրացագիտական առարկաների դասավանդում) և գիտահետազոտական:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

- Ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն ու մշակույթը,
- Ստեղծել համապատասխան ծրագրեր, ուսումնական անհրաժեշտ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ, գրուցարաններ, ինքնուսույցներ «Վրացագիտություն» մասնագիտացման համար,
- Պատրաստել հայ վրացագետների կադրեր՝ պետական ապարատում, գիտության, մանկավարժության, դիվանագիտության, թարգմանության և այլ բնագավառներում աշխատելու համար,
- Ծրագրել և անցկացնել գիտական սեմինարներ, կոնֆերանսներ,
- Ուսումնասիրել, թարգմանել և հրատարակության պատրաստել վրացալեզու հայագիտական արժեքավոր աշխատությունները,
- Նպաստել գիտակրթական կապերի սերտացմանը Երևանի և Թբիլիսիի պետական համալսարանների միջև:

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն (պետական ֆինանսավորում):	Բայրամյան Հ. Ս.

2. Ձավախքը հայ և վրաց գրականության և քաղաքականության մեջ. պատմություն և արդիականություն (պետական ֆինանսավորում):	Ափցիատրի Ն. Կ.
3. Վրաց լեզու. շարահյուսություն (պետական ֆինանսավորում):	Թամարյան Ջ. Լ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. «Ժամանակակից վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն» թեմայի ուսումնասիրությունն արդեն ավարտված է և լույս է տեսել (կատարող՝ Հ. Բայրամյան):

Վրացերենի քերականության բուհական դասագիրքը տեսական և գիտագործնական նշանակություն ունի ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների ուսանողների, Վրաստանի հայկական դպրոցների, հայերենի ու վրացերենի աղերսներն ուսումնասիրողների, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանությունների համար:

Թեմա 2. «Ձավախքը հայ և վրաց գրականության և քաղաքականության մեջ. պատմություն և արդիականություն»:

Հաշվետու ժամանակաշրջանում ավագ գիտաշխատող Ն. Ափցիատրին շարունակել է եռամյա (2008-2010) պլանով նախատեսված թեման: Հավաքել, թարգմանել և վերլուծել է Ձավախքին առնչվող հին, նոր և նորագույն շրջանի գրավոր տեղեկությունները: Ուսումնասիրել է Հայաստանի կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, քաղաքագետների կողմից տվյալ խնդրի արծարծումները: Աշխատանքն ընթացքի մեջ է:

Թեմա 3. «Վրաց լեզու. շարահյուսություն»:

Կրտսեր գիտաշխատող Ջ. Թամարյանը ուսումնասիրել է վրաց և հայ գիտական, գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականությունը, հավաքագրել, թարգմանել և խմբավորել է թեմային առնչվող տեսական և մեթոդական անհրաժեշտ գրականությունը:

Թեմայի շարադրանքը կավարտվի և հրատարակության կպատրաստվի 2010 թ-ին:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հրատարակչական պլանում է և շուտով լույս կտեսնի Հ. Բայրամյանի գիտական հետազոտությունների, գրականագիտական հոդվածների, գրախոսությունների և հարցազրույցների ընտրանին (14-15-հեղ. մամուլ):

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ակադեմիկոս հայագետ, պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկի «Վարդապետը հայոց հիսիսային կողմանց» վրացերեն լույս տեսած աշխատությունը (Թբիլիսի, 1928թ.) թարգմանվել է հայերեն, համեմատվել բնագրի հետ, կատարվել են անհրաժեշտ ուղղումներ և լրացումներ: Գիրքն ամբողջությամբ շարված է (կատարողներ՝ Թամարյան Ջ. Լ., Մանուկյան Վ. Վ.):

Հաշվետու տարում ավագ գիտաշխատող Ն. Ափցիատրին խմբագրել է Վրացագիտության հայկական կենտրոնի տնօրենի «Վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն» ուսումնական ձեռնարկը, մասնակցել է բյուզանդագետների՝ «Կովկասը 10-րդ դարում» խորագրով միջազգային կոնֆերանսին:

Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են Հայաստանում վրաց գրականությանը նվիրված միջոցառումներին, թարգմանել և առանձին գրքով, ինչպես նաև հայկական մամուլում տպագրել են բազմաթիվ գեղարվեստական երկեր՝ պատմվածքներ և նովելներ, հանդես են եկել հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերին վերաբերող դասախոսություններով:

Հրատարակություններ

Դասագիրք	Մեմագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	1	-	3	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնական ձեռնարկ

1. *Բայրամյան Հ. Ս.*, Վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 252 էջ:

Հոդված

1. *Բայրամյան Հ. Ս.*, Հովհաննես Թումանյանը և իր վրացի բարեկամները (նյութեր թումանյանական հանրագիտարանի համար), «Կամուրջ-2009», «Էրովնոլի Ստերլոբա» հրատ., Թբիլիսի, 2010, էջ 330-340:
2. *Թամարյան Ջ. Լ.*, Գարձվածների ոճական արժեքը Շիրազի քնարերգությունում, «Կանթեդ», թիվ 2 (43), «Ասողիկ» հրատ., Երևան, 2010, էջ 61-73:
3. *Թամարյան Ջ. Լ.*, Հովհաննես Շիրազի նորաբանությունների ոճական առանձնահատկությունները, «Կանթեդ», թիվ 3 (44), «Ասողիկ» հրատ., Երևան, 2010, էջ 26-34:

ՕՍՄԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ Սահակյան Լուսինե Սուրենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Սարգսյան Անի Համլետի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

Օսմանագիտության բաժնի հիմնական նպատակն է ուսումնասիրել Օսմանյան կայսրության իրականացրած վարչական, հարկային, ժողովրդագրական, կրոնական և լեզվական քաղաքականությունը, քննել բռնի իսլամացման փուլերն ու նպատակները, տեղանունների թուրքացման մեթոդները (մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանում և այլ հայաբնակ շրջաններում): Կենտրոնի խնդիրներից է նաև այս հարցերի վերաբերյալ թուրքական պաշտոնական պատմագրության կեղծարարություններին հակադարձելը:

Կենտրոնում ուսումնասիրվում են թյուրքականության գաղափարախոս Ջիա Գյոքալփի քաղաքական, մշակութաբանական և տնտեսագիտական հայացքները: Համակողմանի պատմաբանասիրական, աղբյուրագիտական քննության են ենթարկվել Ջիա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքները», «Թյուրքական քաղաքակրթության պատմություն» հիմնարար աշխատությունները, օսմանական տարբեր հանդեսներում հրատարակված սոցիոլոգիական, մանկավարժական, տնտեսագիտական, լեզվաբանական բնույթի հոդվածները, բանաստեղծությունները:

Շարունակվում են նաև աշխատանքները հայ ուսանողի համար օսմաներեն դասագրքի ստեղծման ուղղությամբ:

Բաժնի գործունեության ուղղությունները

1. Օսմանյան կայսրության և հանրապետական Թուրքիայի տեղանունների թուրքացման քաղաքականությունը:
2. Ջիա Գյոքալփի և «Թյուրքականության հիմունքները»:

3. Օսմանյան կայսրության հայկական նահանգների ժողովրդագրական շարժերն ըստ օսմանյան աշխարհագիր մատյանների (tahrir defterler), տարեգրքերի (salnameler) և հայկական աղբյուրների համադրությամբ:
4. Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում:
5. Համշեն գավառի հայկական միկրոտեղանունների իմաստակառուցվածքային քննություն:
6. Հայ ուսանողների համար օսմաներեն դասագրքի ստեղծում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

1. Լ. Սահակյանը և Ս. Վարդանյանը հրատարակել, ծանոթագրել են հայ ազատամարտի մասնակից, Ցեղասպանությունը վերապրած զինվոր Երվանդ Կյուրեղյանի «Իմ հուշերի ճանապարհով» հուշագրությունը, որը պատմավավերագրական անհերքելի մի փաստաթուղթ է: Գրքին կից հրատարակվել են երկու քարտեզ (որպես ներդիր) և լուսանկարներ:
2. Օսմանագիտության բաժինը կազմակերպել է Երվանդ Կյուրեղյանի «Իմ հուշերի ճանապարհով» գրքի շնորհանդեսը ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսի հանրային գրադարանում, ինչպես նաև ԵՊՀ Երկանյանների անվան լսարանում (2010 հունիսի 25-ին):
3. Հրատարակության է պատրաստվել Ալ. Սաֆարյանի «Զիա Գյոքալվըր և թյուրքականության հիմունքները» մենագրությունը (պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Սիմոնյան):
4. 2010 թ. հուլիսին Լ. Սահակյանը դաշտային աշխատանքներ է իրականացրել Արդվինի նահանգի Խոփա գավառի հայախոս կրոնափոխ համշենցիների, ինչպես նաև Ռիգեի նահանգի Արդաշեն և Չամլիհենձին (հին անունը՝ Ներքին Վիժե) գավառների թրքախոս կրոնափոխ համշենցիների շրջանում, ինչի արդյունքում գրառել է բացառիկ բանահյուսական նյութեր, խաղիկներ, պարեր և համշենի բարբառով 100-ից ավելի միկրոտեղանուններ, որոնք առաջին անգամ իրենց իմաստակառուցվածքային քննությամբ կներկայացվեն գիտական շրջանակներին:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրու- թյուն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս	Քարտեզ
-	2	-	-	2	1	4 (ներդիր)

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Sahakyan L. S.*, Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey (անգլերեն, հայերեն, ռուսերեն), Published by Arod Books, Montreal, 2010, 70 p.:
2. *Վարդանյան Ս. Գ.*, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 428 էջ:

Հոդված

1. *Սահակյան Լ. Ս.*, Տրապիզոնի տարածագոտին Օսմանյան կայսրության վարչական բաժանումներում, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 4, «Լուսակն» հրատ., Երևան, 2009, էջ 68-86:

2. Մելքոնյան Ռ. Հ., Մաֆարյան Ա. Վ., Ակադեմիկոս Վ. Գորդիևսկին Օսմանյան կայսրության բռնի իսլամացումների մասին, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, թիվ 6, «Լուսակն» հրատ., Երևան, 2009, էջ 298-304:

Ձեկուցումների թեզիս

1. Сафарян А. С., Согомоян А. С., «Героглы-Кер-оглы» в его армянских версиях, Сюжет Героглы и литература Востока (Материалы международной научной конференции), Национальный институт рукописей Академии наук Туркменистана, 2009, с. 320-361 (նույնը՝ թուրքմեներեն, անգլերեն, էջ 135, նույնը՝ անգլերեն, էջ 247-248):

ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺԻՆ

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Մաղալյան Վլադիմիր Սարգսի, բան. գիտ. թեկնածու, առաջատար գիտաշխատող
2. Գալստյան Իրինա, կրտսեր գիտաշխատող
3. Հովհաննիսյան Լիլյա Հայկազի, կրտսեր գիտաշխատող
4. Մինասյան Մարինե Պետիկի, կրտսեր գիտաշխատող
5. Սարգսյան Վարդուհի Ֆելիքսի, կրտսեր գիտաշխատող
6. Պողոսյան Էմիլ Էդուարդի, կրտսեր գիտաշխատող
7. Վրթանեսովա Տատյանա Վլադիմիրի, լաբորանտ

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	1	-	-	6	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. Մաղալյան Վ. Ս., Գրական-մշակութային կյանքը Երևանի համալսարանում (1919-1999 թթ.), ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 236 էջ+32 էջ ներդիր:

Հոդված

1. Մաղալյան Վ. Ս., Երևանի պետական համալսարանի հոբելյանները (199-1999 թթ.), ԲԵՀ, թիվ 2, Երևան, 2009, էջ 204-223:
2. Մաղալյան Վ. Ս., Գրական հեթանոսությունը նոր մեկնաբանությամբ (գրախոս. Խ. Վարդանյանի «Դանիել Վարուժանը և գրական հեթանոսությունը» մենագրության մասին), «Հոգևոր Հայրենիք» ամսաթերթ, թիվ 12, Երևան, 2009, էջ 4:
3. Մաղալյան Վ. Ս., Մեծ եղեռնից մազապուրծ երզնկացիների տոհմագիրքը, «Էջմիածին», թիվ Ժ, «Ս. Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2009, էջ 123-131: